նկատվում է նաև կնճուճների, երբեմն էլ՝ սափորների ձևավորման մեջ։ Հայտնաբերված անոթների մի մասի նեղ վզի և անմիջապես լայնացող իրանի միացման տեղում անցնում է փորագիր կամ ռելիեֆ ընդգծված գոտի։ Դրանց կողքին հանդիպում են նաև վզի, բստ երևույթին նաև ողջ իրանի բաց ֆոնի վրա մուգ կարմիր, իրար զուգահեռ, ուղիղ գոտիներով հարդարված օրինակներ։

Հայտնաբերված գունազարդ բեկորները ևս թե՛ գույնով, թե՛ կիրառված զարդամոտիվներով (իսկ դրանք գերազանցապես մուգ կամ բաց շագանակագույն ֆոնի վրա մուգ շագանակագույն, կարմիր ներկով արված ուղիղ, հորիզոնական գոտիներ են, կամ նրանց միջև, ուղիղ գծին հենված ալիքաձև զարդեր) ամբողջությամբ միանում են Արմավիրի միջնաբերդի գունազարդ խեցեղենին։ Թերևս բացառություն է կազմում կիսագնդաձև թասի մի բեկոր, որը գունային լուծմամբ՝ բաց մոխրագույն ֆոնի վրա սրճագույն զարդերով (ի տարբերություն միջնաբերդի օրինակների, որոնք մեծ մասամբ մուգ կարմիր ֆոնի վրա կրում են սև զարդեր), կարծես ավելի մոտ է Արտաշատի և Շիրակավանի նմուշներին։

Քաղաքային այս ծայրամասի պեղումներից հայտնաբերվել են նաև լծակավոր աղորիքների բեկորներ, կոկիչներ, քարե կափարիչներ, որոնք կապվում են քաղաքի տնտեսական կյանքի հետ։

Արմավիրի միջնաբերդի և քաղաքային տարածքի հետագա զուգահեռ ուսումնասիրումը անշուշտ կնպաստի Հուշարձանի ընդհանուր պատկերի ամբողջացմանը։

Պատմ. գիտ. թեկնածու Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ
Ի. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«ԱԶԳԱՆՎԵՐ ՀԱՅՈՒՀՅԱՑ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ»
(Ստեղծման 100-ամյակի առթիվ)

Անցյալ դարի կեսերին և ավելի ուշ Արևմտյան Հայաստանում գործում էին հայ ազգային, հասարակական, բարեգործական, կրթական-լուսավորական և մշակութային մի շարք ընկերություններ։ Այսպես, 1860 թ. գրավաճառ Հարություն Մարգարյանի նախաձեռնությամբ հիմնադրվեց «Անձնվեր ընկերությունը», որի նպատակն էր դրել-կարդալ սովորեցնել գավառներից Թուրքիայի մայրաքաղաք եկած հայ պանդուխտներին։ «Անձնվեր ընկերությունը» նույն նպատակով իր մասնաճյուղերն էր ստեղծել Բաղեշում, Դիարբեքիրում, Եվդոկիայում, Կյուրինում, Սղերդում։ 1870 թ. գործում էր «Դպրոցասիրաց ընկերությունը», որը գավառներում վարժարաններ հիմնադրելուց բացի կազմակերպում էր նաև կիրակնօրյա դասախոսություններ չափահասների համար։ «Դպրոցասիրացի», «Անձնվեր ընկերության» և «Արարատյան ընկերության» օրինակով 1879 թ. Կոստանդնուպոլսում հիմնադրվեց «Աղդանվեր հայուհյաց ընկերությունը», որը ձեռնարկեց արևմտահայ գավառներում հայ կանանց և աղջիկների կրթության ու լուսավորության գործը։ Ընկերության հիմնադրումը կապվում է Սիպիլի՝ Զապել Խանջյանի անվան հետ։

Սիպիլը շատ վաղ է սկսել իր գրական կյանքը։ 11 տարեկան հասակում նա արդեն տպագրվում էր Կոստանդնուպոլսի պարբերականներում։ Տարիներ անց Եենիմահալեի ճեմարանի մանկահասակ սանուհին, ձեռագործի իր ուսուցչուհի Սրբուհի Աշճյանի ղեկավարությամբ, մտավ հասարակական գործունեության ասպարեզ «Նպաստամատույց» ընկերության շրջանակներում ակտիվորեն մասնակցելով աղքատ աշակերտուհիների համար գրենական պիտույքներ հայթայթելու գործին։ Գավառներում ժողովրդի սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակը հանգիստ չէր տալիս լուսամիտ և հայրենասեր մարդկանց։ Այս մտահոգություններով էր ապրում նաև Սիպիլը։ Նա սկսեց իրեն մեղավոր զգալ բարեկեցիկ կյանքի, ծաղկառատ պարտեզով շրջապատված իրենց տան, այն բանի համար, որ մինչ այդ իր բանաստեղծություններում երգել էր Շավարշանի բուրումնավետ շուշանները, Եփրատի ծաղկավետ ափերը, երբեք չէր մտածել բուն հայրենիքում ապրող տարաբախտ ժողովրդի մասին, որը ոչ թե շափածո ուղերձների, այլ օգնության կարիք ուներ։

Անցյալ դարի 70-ական թվականներին նա առաջ քաշեց Հայաստանի գավառներում հայ կանանց ու աղջիկների կրթության օջախներ ստեղծելու գաղափարը։ Սիպիլի այս միտքը ոգևորեց նաև նրան շրջապատողներին, որոնց թվում առաջիններից էին մայրը, հորաքույրը, Սրբուհի Աշճյանը և ուրիշներ։ 1879 թ. ապրիլի 11-ին Զապել Խանջյանն իրենց տուն հրավիրեց ճեմարանի ավարտական տարվա իր 8 դասընկերուհիների՝ Արտեմիս Տուտուլյանին, Մարի Զբուկչյանին, Սաթենիկ Հաջյանին և այ-

ցոց[1]։ Ընկերության այս առաջին հավաքին մասնակցել է 12 մարդ։ Բացատրելով իրենց հավաքվելու նպատակը՝ Զապելը ներկայացնում է գավառահայության և հատկապես գավառացի հայ կանանց դառը կյանքը. աշխատունակ գրեթե բոլոր տղամարդիկ պանդխտության մեջ են, երեխաների և ծերերի հոգսն ընկած է կանանց ուսերին։ Նրանք են, որ երեխաներին պիտի դաստիարակեն, պահպանեն հայրենի ավանդույթներն ու լեզուն։ Հարկ է, բացատրում է Սիպիլը, հայ գավառացի կնոջն օգնել կանգուն մնալու ֆիզիկապես և բարոյապես։ «Եթե մենք չհաջողիմք՝ դեթ հիմը դրած կըլլանք և ուրիշ մի կը կատարելագործե զայն»։ Սիպիլը վկայակոչում է աշխարհի քաղաքակրթության պատմական փորձը, ասելով. «Տեսեք, թե շոգեկառքին կատարելագործությունը քանի անձանց կվերաբերի», օրինակ է բերում հայրենիքի ազատության ու երջանկության համար պայքարած հայ հայրենասերներին. «Բայց տեսեք, Նալբանդյան մի յուր ազգին ծառայելու համար կտքնի, կշարշարվի և, աքսորանաց մեջ կմեռնի...»[2]։

«Ազգանվեր հայուհյաց ընկերության» երկրորդ նիստին, որ գումարվեց ճմմարանի վարժուհի Սրբուհի Մելքոնյանի տանը, մասնակցում էր ընկերությանն անդամագրված արդեն 150 մարդ։ Նույն 1879 թ. ընկերության բաժանորդների թիվը հասավ 1500-ի[3]։ Կոստանդնուպոլսի «Փունջ» և «Թերճյումանը էֆքյար» պարբերականներում հրապարակվեց «Ազգանվեր հայուհյաց ընկերության» կանոնադրությունը։ Բացի ընդհանուր ժողովից, որ գումարվելու էր երեք ամիսը մեկ անգամ, ընկերությունն ուներ նաև գործադիր ժողով՝ առանձին ատենապետով և ատենադպիրով։ Կոստանդնուպոլսի Վերդիի թատրոնում «Ազգանվեր հայուհյացի» կազմակերպած առաջին պարահանդեսը 1300 ոսկուց ավելի հասույթ բերեց[4]։

1880 թ. Ղալաթիայի խորհրդարանում կայացավ ընկերության ընդհանուր ժողովը։

1879 թ. ընթացքում ընկերության կուտակած 138,5 հազարի դիմաց 1881 թ. եկամուտը կազմեց 298,5 հազար դահեկան, որը բացի անդամավճարներից, վիճակահանություններից, պարահանդեսներից ստացված հասույթից, գոյանում էր նաև նվիրատվությունների հաշվին։ Այսպես, արևմտահայ կին մտավորական և հասարակական գործիչ Էլպիս Կեսարացյանը «Ազգանվեր հայուհյացին» տրամադրեց իր «Նամականի առ ընթերցասեր հայուհիս» գրքի հասույթը, դրամական օժանդակություն ցույց տվեց Թիֆլիսի «Հայուհյաց բարեգործական ընկերությունը»։ «Ազգանվեր հայուհյացի» խրախուսողներից էր մեծահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին, որը ամեն տարի Թեոդոսիայից 100 ֆրանկ էր ուղարկում ընկերության հասցեով։

1880—1885 թթ. «Ազգանվեր հայուհյաց ընկերությունն» իր առաջին դպրոցները բացեց Քղի Գասապա գյուղաքաղաքում, Հաճընում, Մուշում, Սղերդում, Զարսանճագի Բերրի գյուղաքաղաքում և այլուր։

«Ազգանվեր հայուհյացը» գավառահայ կանանց լուսավորության գործում հավաքագրել էր արևմտահայ կրթված և կարող շատ ուժերի, որոնք եռանդուն մանկավարժական գործունեություն էին ծավալել։ Երկար տարիներ «Ազգանվեր հայուհյացի» ընդհանուր ժողովի առաջին ատենապետն է եղել Եղիսաբեթ Սեղբոսյանը, 1910-ական թթ՝ Սեզարին Շահպազը։ Ընկերության գործադիր ժողովի ատենապետներ են եղել Սիպիլը, Զարուհի Գալեմքյարյանը, և ուրիշներ։ Ի դեպ, Սիպիլը 1881 թ. սկսած անձամբ մեկնել է գավառները, զբաղվել ուսուցչությամբ։ «Ազգանվերը» գործում էր ակտիվորեն, ընկերության մասնաճյուղեր են բացվել Կարինում, Երզնկայում, Ռուսճուքում, Իզմիրում, Ադրիանապոլսում, Ռոդոսթոյում, Ադաբազարում։ Ընկերության գործունեության առաջին շրջանում (1879—1894 թթ.) Հայաստանի տարբեր կողմերում նրա միջոցներով բացվել էր 10 իգական դպրոց։ Ծավալված կրթական-լուսավորական շարժման դժվարություններից մեկը ժողովրդի չքավորությունն էր։ Գավառահայության տնտեսական վիճակը բարելավելու փորձեր էին անում արևմտահայ տնտեսական բարեգործական որոշ միություններ, ինչպես, օրինակ, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի նախաձեռնությամբ ստեղծված «Տնտեսական միություն հայոցը» (հիմն. 1879 թ.)։ 1880 թ. «Ազգանվերն» իր միջոցներից բավական գումար հատկացրեց Վանի, Բայազետի, Վաղարշապատի սովյալներին։

---

1 Տե՛ս «Ամենուն տարեցոյցը», Կոստանդնուպոլիս. 1911, էջ 243։

2 Ե. Պողոսյան, Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հատ. 1, Վիեննա, 1957, էջ 339։

3 Նույն տեղում, էջ 346։

4 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թորոս Աղասյանի ֆոնդ, ցուցակ 1, վավ. 154, էջ 2։

5 Ե. Պողոսյան, նշվ. աշխ., հատ. 1, էջ 345—346, 358։

Ընկերության հիմնադրած դպրոցներն ունեին մեկ նախապատրաստական և երեք հիմնական դասարան։ Սակայն սակավաթիվ երեխաների էր հաջողվում անցնել լրիվ դասընթացը։ 1880—1884 ուսումնական տարիների ընթացքում, օրինակ, Քղի Գասապայի դպրոցը 99 աշակերտուհուց միայն 2 շրջանավարտ տվեց։

Շուտով ծայր առան թուրքական իշխանությունների հետապնդումները։ Բարեգործական ձեռնարկների մեջ սկսեցին «գաղտնի նպատակներ» տեսնել, կասկածի և հետապնդման ենթարկվեց հատկապես «Անձնվեր ընկերությունը»։ 1880 թ. պաշտոնապես արգելվեց ընկերությունների և դպրոցների սրահներում ժողովներ ու բանախոսություններ անցկացնելը։ 1882 թ. Բարձր Դուռը հայոց պատրիարքարանից պահանջեց ազգային բոլոր ընկերությունների ցուցակը։ Սահմանափակվեցին Կոստանդնուպոլսի «Միացյալ ընկերության» գործունեության շրջանակները, որը կազմվել էր 1880 թ., իր մեջ միավորելով Հայաստանում գործող երեք կարևոր ընկերություններ՝ «Արարատյան ընկերությունը», «Դրպրոցասիրաց-արևելյան» և «Կիլիկյան ընկերությունը»։

1887 թ. Օսմանյան կառավարությունը Ազգային խառը ժողովին հարկադրեց նոր կանոնադրությամբ կրկին վավերացնել գոյություն ունեցող ազգային ընկերությունները։ Այդ պահանջին ենթարկվեցին ինչպես «Ազգանվեր հայուհյացը», այնպես էլ նրա օրինակով տեղերում ստեղծված «Ագապյան», «Մանդիտյան», «Գայանյան», «Հռիփսիմյան» ընկերությունները, ինչպես նաև Բերայում 1881 թ. կազմակերպված «Դթասեր տիկնանց», «Ադնվուհի տիկնանց առաջադիմասեր» և այլ ընկերությունները։ Սրանցից առավել եռանդուն և արդյունավետ գործունեությամբ աչքի էր ընկնում Սեբաստիայի «Հայուհյաց ընկերությունը» (կամ «Հայ տիկնանց ընկերություն»), որը 400 անդամ ուներ և թաղական դպրոցներում կրթում էր 500-ից ավելի կանանց ու աղջիկների։ Ընկերությունը դպրոցի նոր շենք կառուցեց և ինքն էր հոգում կարիքավոր աշակերտների համար գրենական պիտույքների ձեռքբերման գործը։ Կոստանդնուպոլսի «Հայրենիք» լրագիրը նկարագրում է, թե որպիսի պատրաստակամությամբ էին սեբաստացի կանայք օգնում իրենց քաղաքում կանանց լուսավորության շնորհակալ գործին։ Աղջիկների համար դպրոցական նոր շենքի կառուցման օգտին «կանանցմե ոմանք ստակ տվին, ոմանք էլ ճայտունուն ոսկիին կտրելով տվին»[6]։ Սեբաստացի կանայք նախաձեռնել էին հիմնել նաև մանկապարտեզներ, սակայն շատ ու շատ մտադրություններ անկատար մնացին։ «Ազգանվեր հայուհյացի», ինչպես նաև հայ ազգային լուսավորական ու մշակութային ընկերությունների գործունեությունը կառավարությունը հիմնավորապես խաթարեց 1894 թ.[7]։ Դեռևս 1893 թ. արգելվեց բարեգործական նպատակներով հանգանակություններ կատարելը։ Փակվեցին ընկերությունների միջոցներով պահվող դպրոցները։ «Ազգանվեր հայուհյաց ընկերության» անվան հիշատակությունն իսկ արգելվեց։ Հետապնդումից խուսափելու համար նրա մասին ակնարկում էին «Կրթանվեր հայուհյաց ընկերություն» անվան տակ։ Թուրքիայի իշխանությունները գավառներում ձեռնարկեցին և իրականացրին հայկական առաջին զանգվածային կոտորածները։ Համիդյան սև ռեակցիայի այս ժամանակաշրջանում ազգային-հասարակական ամեն մի գործունեություն մահվան գին ուներ։

1908 թ., Աբդուլ Համիդի գահընկեցությունից հետո, Կոստանդնուպոլսում, կրկին Սիպիլի ջանքերով, «Ազգանվեր հայուհյաց ընկերությունը» վերսկսեց իր գործունեությունը։ Ժամանակաշրջանն ու հասարակական գործիչների խրդիրներն ահա թե ինչպես է ներկայացնում Սիպիլն իր հրապարակային ելույթներից մեկում. «Հայաստանի մի ծայրից մյուսը ողբի, տառապանքի հեծեծանք է լսվում։ Արդեն քանի տարիներ են, որ մի օր չի անցնում, որ կոտորածի սրտաճմլիկ աղաղակը չգոռա մեր ականջներին, արյունի ու հոգևարքի տեսարաններ չտագնապեն մեր երևակայությունը։ ...Հոռետեսներ մեզ ուզում են համոզել, թե մի քանի տարուց հայի անունն իսպառ պիտի ջնջվի երկրի երեսից։ ...Հայ գյուղացու ձեռքից խլում են սերմացու ցորենը ցանքի ժամանակ։ Մոխիր են դարձնում նրա արտը հունձքի պահին։ Ծեծի ու բանտարկության սպառնալիքի տակ բռնադատում են նրան, որ հացի պատառն առնի իր դավակների բերնից ու հարկավաքներին հանձնի։ ...Եվ սակայն, այդ խեղճ ու քաջասիրտ մարդիկ իրենց բոլոր չարչարանքներուն մեջ զարդացումի, ուսման ծարավը ունին. մի կողմեն կտվայտին, կջարգվին, կմեռնին, մյուս կողմեն՝ «դպրոց, գիրք, լույս» կգոչեն, ինչ որ զմեզ կզարմացնե, կշահագրգռե, կխռովե»։ «Ազգանվերի» գործիչներն ըմբռնելով գավառա-

---

6 «Հայրենիք», Կ. Պոլիս, 1891, № 62։

7 «Ազգանվեր հայուհյաց ընկերության» գործունեության առաջին շրջանը մինչև 1895 թ. գիտելը ճիշտ չէ, քանի որ այն, ինչպես նշվեց, դադարեց գործելուց դեռևս 1894 թ.։

8 Սիպիլ, Ազգանվեր հայուհիք. «Ամենուն տարեցույցը», Կոստանդնուպոլիս, 1910, էջ 127։

բնակ հայության վիճակի ծանրությունը, նպատակ են դնում բարձրացնել նրա բարոյական ոգին, օգնել ոտքի կանգնելու, կենդանի պահելու հայ ժողովուրդը հայոց հողի վրա։ Նրանք պնդում են, որ հանցագործություն է համակերպվել կատարված ողբերգության հետևանքների հետ։ Երկարատև ռեակցիայի տարիներն իրենց կնիքն էին դրել մարդկանց հոգեբանության վրա։ Չնայած կարծեցյալ դեմոկրատական ազատություններին, շատ դժվար էր մարդկանց դրդել բարեգործության։ Ամենքը խուսափում էին ազգային գործերին մասնակցել։ Զգալիորեն պակասել էր նաև հայ ունևորների թիվը։ «Մինչդեռ ամեն մարդ իր տանը անկյունները կպահվտի կամ ասդին-անդին կփախչի հարձակումի, կոտորածի սպառնալիքի տակ՝ մեր օրիորդները անվեհեր կշարունակեն իրենց հանձն առած պաշտոնը»,— գրում էր Սիպիլն այդ օրերին[9]։

Այս ժամանակամիջոցում շարունակում են «Ազգանվեր հայուհյացի» մասնաճյուղեր բացվել ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ արտասահմանի հայկական գաղթօջախներում[10]։

Մեծ փորձություններ էին սպասում «Ազգանվեր հայուհյաց» ընկերությանը նաև նրա գործունեության երկրորդ շրջանում։ Իրենց ազատամիտ և առաջադեմ ձևացնող երիտթուրքերի իշխանության հենց երկրորդ տարում՝ 1909 թ. Կիլիկիայում հայերի մի նոր մասսայական կոտորած սանձազերծվեց։ Հրաշքով փրկվածների մեջ հազարավոր որբ երեխաներ կային։ «Ազգանվերիս» գործիչները խորհում էին որևէ կերպ նրանց օգնության հասնել։ 1909 թ. աշնան այդ օրերին Կիլիկիա մեկնելը հավասար էր հերոսության։ Սակայն այդ գործը հանձն առավ «Ազգանվերի» ատենադպիր Արշակուհի Թեոդիկը։ Մեկ ամիս մնալով Կիլիկիայում, նա ոչ միայն դպրոցներ ու որբանոցներ կազմակերպեց, այլև ինչ-ինչ միջոցներով կարողացավ օտարերկրացու անվան տակ այցելել Կիլիկիայի բանտերի զնդանները, ուր տարիներ շարունակ խոշտանգվում էին հայ ազգային-ազատագրական պայքարի մի խումբ հերոս գործիչներ։ Արշակուհի Թեոդիկին հաջողվեց պայմաններ ստեղծել հետագայում նրանց ազատելու համար։ Կիլիկիայից վերադառնալուց հետո նա իր գործուղման հաշվետվությունը ներկայացրեց փաստերով և մերկացնող լուսանկարներով համեմված մի գրքույկով, որ լույս տեսավ 1910 թ. «Ամիս մը ի Կիլիկիա» խորագրով։ Այս գիրքը, որ նվիրված էր Սիպիլին, իսկ հասույթը՝ «Ազգանվերին», մի շառաչուն ապտակ դարձավ համաշխարհային բուրժուազիայի երկերեսանի գործիչներին, որոնք դեմոկրատիայի քարոզներով փորձում էին կոծկել ազգերի բնաջնջման իրենց գիշատիչ քաղաքականությունը։ Գիրքը բարձր գնահատականի արժանացավ ինչպես Թուրքիայի, այնպես էլ արտասահմանի առաջադեմ հասարակայնության կողմից։ Սիպիլն այս գրքին կցեց իր շատ ուշագրավ առաջաբանը, որ հիմնականում «Ազգանվեր հայուհյաց ընկերության» պատմությանն էր վերաբերում։

1908—1914 թթ. «Ազգանվեր հայուհյաց ընկերության» Կոստանդնուպոլսի բաժանորդների թիվը հասնում էր 390-ի, որոնց անդամավճարներից ընդամենը 200 ոսկի գումար էր գոյանում։ Սակայն վկայություններ կան, որ 1908—1914 թթ. ընթացքում «Ազգանվեր հայուհյացը» կարողացել է 2000 ոսկի ծախսով 39 դպրոց պահել[11] Մուշում, Սասունում, Կարինում, Ադանայում, Զեյթունում, Հաճընում, Տարսոնում, Մարաշում, Դյորթ-Յոլում, Հասան-Պեյլիում, Այնթափում, Ալպիստանում, Եփեսոսում, Թալասում և այլուր։ Այս դպրոցներից 23-ը գործել են 1910—1912 թթ.[12]։

1908-ից հետո, Կոստանդնուպոլսում երիտասարդ աղջիկների մի խումբ, հիմնականում Սիպիլի նախկին սաներից, կազմեց «Ազգանվեր հայուհյաց ընկերության» օժանդակ թարգմանչական խումբ, որի նպատակն էր հայ երեխաների համար համաշխարհային մանկական գրականության լավագույն գործեր թարգմանել և հրատարակել[13]։

---

9 Նույն տեղում, էջ 128։

10 1920 թ. Փարիզում լույս տեսած Témoignages inédits sur les atrocités turques commises en Arménie Suivis d'un récit de l'épopée arménienne de Chabin-Karahissar. Recueillis par la Société des Dames Arméniennes (Azkanever de Constantinople) ժողովածուից, որը կազմել, թարգմանել ու հրատարակել է ընկերության ամենաակտիվ գործիչներից մեկը՝ Արշակուհի Թեոդիկը, տեղեկանում ենք, որ 1908 թ. «Ազգանվեր հայուհյացիս» ջանքերով գավառներում գործել է 50 դպրոց՝ 3000 աշակերտուհիներով, նույնիսկ 1910 թ. Կարինում հիմնվել է մանկավարժական ուսումնարան, իսկ ընկերության գործունեությունը (իհարկե, հարկադիր ընդհատումներով) շարունակվել է մինչև 1920 թ.։

11 Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 363։

12 «Հայկական Սովետական Հանրագիտարան», հատ. 1, էջ 110։

13 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թորոս Ազատյանի ֆոնդ, ցուցակ 1, վավ. 155, էջ 2։

1915 թ. արևմտահայության նկատմամբ Թուրքական իշխանությունների սանձազերծած կոտորածն ու բռնագաղթը, հայ ժողովրդի Մեծ եղեռնը վերջնականապես խափանեց ինչպես հայ ազգային մշակութային ու բարեգործական այլ կազմակերպությունների, այնպես էլ «Ազգանվեր հայուհյաց ընկերության» գործունեությունը։ Սիպիլի հուշերում այդ առթիվ կարդում ենք. «Ավաղ, մարդախոշոր պատերազմին արհավիրքը վրա հասավ, Ընկերությունը քայքայվեցավ, ցրվեցավ, կործանեցավ։ Ամենուն եռանդը մարեցավ արյան արցունքի հեղեղներու մեջ»[14]։

Այսօր, երբ լրացել է արևմտահայ այդ նշանավոր ընկերության հիմնադրման 100 տարին, անդրադառնալով նրա կատարած շատ դժվարին, բայց շնորհակալ գործունեությանը, անհնար է չնշել հայ ժողովրդի, հատկապես նրա արևմտահայ հատվածի ազգային առաջադիմության, հայ կանանց կրթության և լուսավորության ուղղությամբ ընկերության գրեթե 40-ամյա գործունեության զգալի դերն ու նշանակությունը։ Անժխտելի է նաև հայ անվանի կին հասարակական գործիչ, մանկավարժ և գրող Սիպիլի՝ Զապել խանչյան-Ասատուրի դերը «Ազգանվեր հայուհյացի» հիմնադրման, գոյատևման և հայրենանվեր գործունեության ընթացքում։

Պատմ. գիտ. թեկնածու Մ. Լ. ԱԴԱՆԱԼՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Մկրտիչ Էմինի մահից հետո նրա թողած բոլոր հին ու նոր ձեռագրերը, ըստ կտակի, ժառանգում է Գրիգոր Խալաթյանցը։ Էմինի կտակակատարներ Ն. Միկյուլինն ու Ի. Լ. Սերբերյակովը «Հայագետ Էմինի կտակի մասին» իրենց հոդվածում («Արձագանք», 1892, № 125) այդ առթիվ գրում են. «Կտակի յոթներորդ հոդվածի համաձայն, Էմինից մնացած հին հայերեն ձեռագիրները, ինչպես և նորա ձեռագիր գրվածները, թարգմանությունները և ամեն տեսակ թղթերը տված են ի սեպհականություն նորա աշակերտ Գ. Հ. Խալաթյանցին, որ բռնում է նորա տեղը Լազարյան ճեմարանի մասնագիտական դասարանում»։ Նրանք չորս խորագրերով հրապարակում են Գ. Խալաթյանցի ժառանգած նյութերի ցանկը.

«Ա. Հին հայերեն ձեռագիրներ»։

«Բ. Էմինի ձեռագիր գրվածներն ու թարգմանությունները»։

«Գ. Էմինի ձեռագիր երկասիրություններն ու թարգմանությունները, որոնք նա հրատարակած է զանազան ժամանակներում»։

«Դ. Ձեռագիր երկասիրություններ, որոնք այլ անձինք հանձնած են Էմինի տնօրինությանը»։

Այս չորս խմբերից մեզ հետաքրքրում է առաջինը, ուստի և այն բերում ենք ամբողջությամբ.

«Ա. Հին հայերեն ձեռագիրներ

1. Անվավերական գրվածքներ, արտագրած Ս. Էջմիածնի գրադարանի ձեռագիրներից (թվով 21)[1]։

2. Ոսկվեյ Անեցվո Ժամանակագրություն, ձեռագիր (XVII դարու)։

3. Աղեքսանդր Մակեդոնացու Պատմությունը, ձեռագիր 1696 թ.[2]։

4. Տոմարագիտություն երկաթագիր, թերի։

5. Համառոտ բառգիրք, ձեռագիր մագաղաթի վրա գրած 1620 թ.։

6. Դ. Մագիստրոսի թուղթք, Էմինի ձեռքով արտագրած 1852 թ.։

7. Դ. Մագիստրոսի Ոտանավորք, արտագրած Էմինի ձեռքով։

8. Տետրակ քառածայլ, գրած Էմինի ձեռքով, բովանդակում է զանազան հին հայ մատենագիրների գրվածներ (թվով 16), որոնք արդեն տպված են, բացի Դ. Մագիստրոսի Թղթերից ու Ոտանավորներից և Համառոտ բառգրքից։

9. Պատմություն Ներսես Մեծի, գրած Մեսրոպ երեցի (արդեն տպագրված է)։

10. Հայոց կաթողիկոսների թղթակցությունք վրաց Կյուրիոն կաթողիկոսի հետ (Ուխտանես, տպած է)։

11. Գրիգոր կաթողիկոսի թուղթք, որ գրած է նորա եղբայր Ներսեսը (տպագրված է)։

12. Սմբատա Պատմություն, արտագրված Էմինի ձեռքով 1853 թ. (տպած է)։

13. Մովսես Կաղանկատվացու Աղվանից պատմություն, Մխիթար Այրիվանեցու Պատմություն, Քաղվածք Ստեփաննոս Սյունեցու պատմությունից, արտագրած Միքայել Սալանթյանի ձեռքով 1835 թ. (տպած է)։

14. Պատմություն Մատթեոս Ուռհայեցվո (տպած է)։

---

[14] Նույն տեղում, էջ 2—3։

[1] Փակագծված տվյալները բնագրինն են։

[2] Թվականը ուղղելի՝ 1695։